

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌԷՍ ՆԵՐՍ

Ուրբաթ, 22 Յունիս 1973, Երեկոյեան Ժամերգութեան աւարտին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին կից Ս. Էջմիածին մատուոյ մէջ Գերշ. Տ. Շահէ Եպս. Անէմեան կատարեց նախ կիսասարկաւագութեան եւ անմիջապէս յետոյ տուող սարկաւագութեան աստիճանի տրւելութիւնը Ուրբաակիր Տիրացու Յակոբ Գոճակէօղեանի: Անկէ ետք կատարուեցաւ յիշեալին եւ Արսէն Սրկ. Յովակիմեանի քահանայական կոչման արարողութիւնը: Արարողութեանց խորտաւելակն էր Հոգշ. Տ. Գեղամ Մ. Վրդ. Զաքարեան:

Յաջորդ օր, Շաբաթ, 23 Յունիս, կէսօրէ առաջ, Գերշ. Սրբազանը կատարեց քահանայական ձեռնադրութիւնը յիշեալներուն, Ս. Էջմիածին մատուոյ մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին: Ընծայեալները, խորտաւելակ Հայր Սուրբին կողմէ ներկայացուեցան ձեռնադրելի Ս. Հօր, որ պատշաճ աղօթքներէ ետք շնորհեց անոնց Ս. Պատարագի զղեստները, իւրաքանչիւրը տրւելութեան ուրոյն աղօթքով: Յուզիչ էր պահը երբ երկուքն ալ խորանի բեմէն ձեռամբարձ կը դառնային ժողովուրդին, ի նշան աշխարհէն իրենց հրաժարման: Օծման խորհրդաւոր պահուն, Արսէն Սարկաւագ վերակոչուեցաւ Տ. Ռուբէն Արեղայ, իսկ Յակոբ Սարկաւագ՝ Տ. Ներսէս Քահաւաճ: Սրբազանը ապա անոնց տուաւ Ս. Սկիւռ, աղագէսով շնորհելով Ս. Պատարագ մատուցանելու իշխանութիւն: Ամբողջ Միաբանութիւնը բեմ բարձրանալով համբուրեց ընծայեալներու միւտոնած ճակատն ու ափերը:

Կէսօրէ ետք, Ժամերգութեան աւարտին, Գերշ. Տ. Շահէ Եպիսկոպոս նոյն եկեղեցիին մէջ կատարեց վեղարի օրհնութիւնն ու տրւելութիւնը Տ. Ռուբէն Արեղային, որ ապա, Տ. Ներսէս Քահանային հետ մեկնեցաւ Բեթղէհէմ, ուր անցուց քառասունքի իր ապաշխարութեան շրջանը, ուսանելով Ս. Պատարագի կարգերը Վանքի Տեսուչ Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Տեփոյեանէ եւ Հոգշ. Հ. Նարեկ Վրդ. Մարֆաղէյեանի հսկողութեան ներքեւ:

20 Յուլիս, Ուրբաթ կէսօրէ առաջ Տ. Ռուբէն Արեղայ, իսկ Շաբաթ, 21 Յուլիս Տ. Ներսէս Քահանայ մատուցին իրենց անդրանիկ Ս. Պատարագները Ս. Էջմիածին մատուոյ մէջ, որմէ ետք Տ. Ներսէս Քահանան մեկնեցաւ Բեթղէհէմ՝ իր պաշտօնավայրը:

Ստորեւ կու տանք ամփոփ կենսագրութիւնները ընծայեալներուն:

Տ. ՌՈՒԲԵՆ ԱՐԷ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Աւագանի անունով Արսէն, ծնած է 5 Նոյեմբեր 1913ին՝ Նոր Զուղա (Սպահան), բարեպաշտ ընտանիքի մը մէջ: Նախակրթութիւնը տեղւոյն աղպային վարժարանին մէջ ստանալէ ետք մեկնած է Կալկաթա (Հնդկաստան), ուր երեք տարիներ շարունակած է իր ուսումը Բողոքականներու Սէյնթ-ձէյմս

վարժարանին մէջ: Ապա մտած է դործի ասպարէզ, բնտրելով առևտրական ճիւղը: Բ. Համաշխարհային Պատերազմի տառն վերադարձած է իր ծննդավայրը: Սարկաւազ ձեռնադրուած է 1968ին, 1972ին եկած է Երուսաղէմ եւ տարի մը հետեւած Ս. Աթոռոյս Ընծայարանի դասընթացքներուն, պատրաստուելու համար քահանայութեան սրբազան ասպարէզին:

Տ. ՆԵՐՍԷՍ ՔԶՆՅ. ԳՈՃԱԿԷՕԶԵԱՆ

Աւագանի անունով Յակոբ, ծնած է Կ. Պոլիս 1916ին: Շատ կանուխ կորսնցուցած է հայրը՝ որ սպաննուած է տարադրութեան մէջ ի Դամասկոս: Նախակրթութիւնը Պէշիկթաշի Մաքրուհեան վարժարանին մէջ ստանալէ ետք Նետուած է դործի ասպարէզ: 1956ին, Երր հանգուցեալ Տ. Կարապետ Ա. Քհնյ. Անդրէասեան Ս. Աթոռէս Պոլիս զրկուած էր միարան բերելու, Յակոբ կը հաւանի զալ Երուսաղէմ, ուր տառն մը կը ծագայէ իրբեւ լուսարար: 1961ին ձրդելով Ս. Քաղաք կը մեկնի Պէյրութ, ուր կը մնայ աւելի քան տասնամեակ մը: Հոն կ'աւարտենայ եւ 1972ին վերադառնալով Ս. Աթոռ, տառն մը կը ծագայէ Բերդէնէի մէր վանքէն ներս: Իսկ ձեռնադրութենէն ետք ալ կը շարունակէ քահանայադործել Ս. Մենդեան Տաճարէն ներս:

Սինն շնորհաւորելով զիրենք՝ կը մաղթէ յաջողութիւն իրենց տառուածահաճոյ դործերուն: